ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար ավիասպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿԴ-ԲԸԱՀԾՁԲ-16/2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 23.03.2016թ. ժամը 11-00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Դանիելյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա. Հովսեփյան, Լ. Նալբանդյանը, Վ.Մկրտչյանը, քարտուղար Մ.Մուրադյանը, «Տրինիդատ» ՍՊԸ տնօրեն Ն. Դերբալյանը և «Լոկա» ՍՊԸ ներկայացուցիչ, լիազորված անձ՝ Լիանա Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԲԸԱՀԾՁԲ-16/2» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«Տրինիդատ» ՍՊԸ** (ք. Երևան, Զաքյան 6/36)
2. **«Լոկա» ՍՊԸ** (ք. Երևան, Մ. Մաշտոցի 38)
3. **«ՍՍ Թրեվլ» ՍՊԸ** (ք. Երևան,Մաշտոցի 17-22)

Բ) հայտ չեն ներկայացրել հրավեր ստացած մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած ծրարի և փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 **«ՍՍ Թրեվլ» ՍՊԸ** կողմից ներկայացված ծրարը և հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 **«Տրինիդատ» ՍՊԸ** կողմից ներկայացված ծրարը և հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

3.3 **«Լոկա» ՍՊԸ** կողմից ներկայացված ծրարը համապատասխանում է, իսկ հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին ոչ համապատասխան, մասնավորապես բացակայում է Հավելված 9-ը(Հայտի ապահովումը) և Վճարման պահանջագիրը:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/		
		«ՍՍ Թրեվլ» ՍՊԸ	«Տրինիդատ» ՍՊԸ	«Լոկա» ՍՊԸ
1	**Ավիասպասարկման ծառայություն** Երևան-Մոսկվա -Երևան 1հատ Էկոնոմ կարգ	**171000**	**175800***	**185000**

* Համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության՝ կազմակերպվեց ներկայացված գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ: Բանակցությունների արդյունքում **«Տրինիդատ» ՍՊԸ** -ն առաջարկեց ծառայությունը մատուցել **170000** ՀՀ դրամով :

Կազմակերպությունները հանդիսանում են ԱԱՀ չվճարող:

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

- Ղեկավարվելով Կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ՝ հանձնաժողովը որոշեց ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել **«Տրինիդատ» ՍՊԸ -ին,** որպես նվազագույն գին ներկայացրած մասնակից:
- Ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով՝ մերժել **«Լոկա» ՍՊԸ -ին**:
- Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՍՍ Թրեվլ» ՍՊԸ -ին:**
- Ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ,
- Արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ ընթացակարգի արդյունքում պայմանագրեր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ դրան հաջորդող աշխատանքային օրը), ժամը 11:00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ.Դանիելյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Հովսեփյան

_____ Լ. Նալբանդյան

_____ Վ.Մկրտչյան

_____ «Տրինիդատ» ՍՊԸ տնօրեն Ն. Դերբայան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան